№ 182 ԿԻՐԱԿԻ, 19 ՕԳՈՍՏՈՍԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 19 ՕԳՈՍՏՈՍԻ № 182

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԴՐԻԳՈՐ ԱՐԾԵՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի Ց ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՐՈՒԲԼԻ.
Օգոստոսի 1-ից մինչև սեպտ. 1-ը 85 կ.
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կ. նամակատրոշմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. շուտարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿՐ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պիտիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.
291. 50—31 (հ. կ.)

ԿՈՎԿԱՍԵԱՆ
ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ
Ամ. 4 Ա. Մ.
Գարնանցիցէ ամենարբել
ԲՈՒԺԻՀ
„ՆԱՐԶԱՆ" | Ծովամակարդակից | „ԷՍՍԷՆՏՈՒԿԻ № 20."
ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ (աղի-ալկալեան) №№ 4, 4 նոր, 6, 17, 18, 18 բիւվ. 2, 19, ԲԱՏԱԼԻՆԵԱՆ (անփոխարինելի լուծողական). ՍՄԻՐՆՈՎԵԱՆ-ԵՐԿԱԹԱՑԻՆ (պարունակում է մինդեղ). ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԼԻՊԵՇԿԱՆԵՐ (վերացնում է տապը). ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԱՂ (փոխարինում է № 17 ջրին).
ՋՐԵՐԻ ԵՒ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԻՆ—ТИФЛИСЪ, Гановская, д. Гургенова, №№ 8—10. Тел. 898.
Գլխաւոր պահեստը Վարշաւեան կից՝ Պեատիգորսկում. Պրէյս-կուրանտները ձրի.
Դիմել՝ Пятигорскъ, Управленіе водъ.
(կ.) առ. 224. 39—20

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴՊՐՈՑ բժ. Պրոժէյկօյի Կիէվում, Բէսարաբկա № 5. Դպրոցին կից կայ կլինիկա և Բեռնագէնեան կաբինէտ։
Դասատուները համալսարանի պրոֆէսսորներ են և դոցէնտներ։ Խնդիրների ընդունելութիւնը մինչև սեպտ. 30-ը։
(կ.) առ. (Вид. 51482) 3—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
(Միխայլովսկի պր. № 138)
Երեխաների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից։ Պարապմունքները կը սկսվին սեպտեմբերի 1-ին։
(կ.) առ. 583. 4—3

1912 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ԲԱՑԵԼՈՒ Է ԵՐԵՔ ՄՐՑԱՆԱԿ

ա) Յանուն տիկին Մ. Մակարեանի՝ լաւագոյն ինքնուրոյն պիէսի համար (50 ր.)։
բ) «Յօրելեանական» (ի յիշատակ ռուսահայ թատրոնի 50-ամեակի) լաւագոյն թարգմանական պիէսի համար (100 ր.)։
գ) Յանուն Ա. Մելիք-Այվազեանի՝ լաւագոյն, ոչ մի տեղ չը ներկայացված ինքնուրոյն պիէսի համար (150 ր.)։

Հեղինակները և թարգմանիչները, եթէ ցանկանում են գաղտնի պահել իրանց անունը-ազգանունը, կարող են կնքած անուն գրել պիէսների վրա, իսկական անուն-ազգանունները գրելով մի փակ ծրարի մէջ, որ կը բացվի միմիայն մրցանակաբաշխ յանձնաժողովի որոշումից յետոյ։

Այս տարի պիէսները ընդունվում են մինչև սեպտեմբերի 15-ը, որից յետոյ ստացված պիէսները քննութեան չեն առնվի։

Մրցանակի կարելի է ներկայացնել միմիայն նոր պիէսներ, այսինքն այնպիսի պիէսներ, որոնք հայ բեմի վրա դեռ չեն ներկայացված կամ առաջին անգամ ներկայացված են վերջին թատերաշրջանում (առաջին և երկրորդ մրցանակներ)։

Մրցանակը կարող է յանձնվել լիովին կամ կիսով չափ, նայելով պիէսի գրականական արժանաւորութիւններին։

Մրցանակի արժանացած պիէսի առաջին ներկայացման իրաւունքը պատկանում է Հայոց Դրամատիկական Ընկերութեան և այդ ներկայացման համար վարչութիւնը թարգմանիչներին ոչինչ չէ վճարում, իսկ ինքնուրոյն պիէսների հեղինակներին վճարում է զուտ արդիւնքի 10%-ը։

Այդ իրաւունքը վերապահվում է վարչութեան միմիայն մի տարվայ ընթացքում, սկսած պիէսի ստանալու օրից։

Պիէսները պէտք է ուղարկել վարչութեան նախագահին հետևեալ հասցէով՝ Тифлисъ ул. Паскевича, 1. Т. Н. Іоаннисянцу, Արտասահմանից՝ Tiflis (Russie), rue Paskevitch, 1. M.-r Tigran Ioannissian avocat.
առ. (օգ. 5, 19) 550. 3—3

ՆՈՐ ՇԱՒԻՂՆԵՐԻ ՄԷՋ

Նոր երկաթուղիների կառուցումը Կովկասում հանդէս է բերում նոր ապրանքների փոխադրութեան հարցեր։

Երբ շինվեց անդրկովկասեան երկաթուղին, նրա բեռնակրութեան ամենամեծ տեղը բռնեց Նաֆթը, որի համար պահանջվեցին նոյնիսկ նոր տեսակի կառքեր յատուկ յարմարութիւններով։

Ենթադրվում է, որ եթէ աջողվի կառուցանել երկաթուղի Կարսից մինչև Օլթի, այն ժամանակ շահագործութեան մէջ կը դրվին այն հարուստ քարածխանոցները, որոնք գտնվում է Օլթիի մօտ։ Քարածուխը այդտեղ բռնել է մեծ տարածութիւն, մօտ 40 վերստ երկայնութեամբ և 10 վերստ լայնութեամբ, որը կարող է մատակարարել վառելանիւթ շատ և շատ տարիների համար՝ հարիւր հազարաւոր պուդերով։

Եթէ կառուցվի երկաթուղի Բաթումից դէպի Արդահան, այն ժամանակ շահագործութեան մէջ կը դրվին բազմատեսակ մետաղների և բաղադրութիւնների հանքեր, որոնք ներկայումս իրանց վրա են գրաւել թէ տեղական և թէ օտար դրամատէրերի ուշադրութիւնը։

Նոր ապրանքներ կը սկսեն ապրել գալ, երբ կը շինվեն Կախէթի, Շուշու և այլ երկաթուղային գծերը։ Եւ շուտով մեր երկրի գլխաւոր առևտրական հանգոյցատեղերը և նաւահանգիստները կը լցվեն բազմատեսակ ապրանքներով, որոնք ներկայումս մընացել են անշարժ և փակ դրութեան մէջ հաղորդակցութեան միջոցների պակասութեան պատճառով։

Մենք, անկասկած, մտել ենք և մտնում ենք խոշոր տնտեսական ձեռնարկութիւնների իրագործման շրջանի մէջ և կապ ենք հաստատում թէ համառուսական և թէ համաշխարհային շուկայի հետ։ Մենք նախկին դանդաղաշարժ և յամրաքայլ արդիւնաբերական կեանքից անցնում ենք աւելի տենդային և արագընթաց շարժումների։ Եւ անշուշտ կարիք ունենք աւելի ձեռնհաս և հմուտ վերաբերմունքի դէպի նոր տնտեսական կեանքի պրագաները և հանգամանքները։

Նոր պայմանները հանդէս են բերել նոր գործելակերպերի պահանջ մեր երկրի արդիւնաբերութեան և վաճառականութեան մեծապէսութեամբ։ Բարի՝ մեր երկրի ինտելիգենտ դասի համար՝ լուրջ կերպով զբաղվել նոր տնտեսական կեանքի ուսումնասիրութիւններով և մշակել միջոցներ լաւագոյն պայմաններով կապեր հաստատելու աւելի հեռաւոր երկիրների արդիւնաբերական-առևտրական աշխարհի հետ։

Ընդարձակվող տնտեսական կեանքը պահանջում է ընդարձակ և խոշոր գործառնութիւններ. իսկ դրանց լիակատար աջողութեան համար անհրաժեշտ է աւելի լուրջ պատրաստութիւն։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
17 օգոստոսի

Պետերհոֆ.—Բարձրագոյն ներկայութեամբ տեղի ունեցաւ եգէրների զօրահանդէսը գնդի տօնի առիթով։ Ներկայ էր նաև Կայսերական Ընտանիքը։ Զօրահանդէսից յետոյ, Մեծ պալատի Պետրոսեան դահլիճում նախաճաշ տրվեց Կայսրի ներկայութեամբ, որին հրաւիրված էին մասնակցելու գնդի օֆիցէրները։

—

Պետերբուրգ.—Հայրենական պատերազմի հանդէսին Բորոդինեան դաշտում Կարմիր Խաչը կազմակերպում է մշտական բժշկական կէտեր։

—

Պետերբուրգ.—1913 թ. նախահաշիւի համաձայն մէկ միլիոն ռուբլի է պահանջվում գիւղացիական վարկային ընկերութիւններին հացահատիկներ մաքրող մեքենաներ մատակարարելու համար։

—

Կիէվ.— Խուզարկու բաժանմունքի նախկին կառավարիչ Միշուկը, թաղական վերակացու Կլէյնը և ագենտ Պոլոգիսկն դատի են յանձնվում Իւշչինսկիի սպանութեան գործում կեղծիք կատարելուն համար։

—

Աստրախան.—Զերնօեարեան գաւառի Զաւէտնայա գիւղում ժանտախտի նշաններով մեռել է 5 հոգի։

—

Զուլֆա.—Խոյից դէպի Մակու դուրս եկած կօզակների հարիւրեակը Ղարաքիլիսէ գիւղից 7 վերստ հեռու յարձակման ենթարկվեց։ Յարձակումը յետ է մղված առանց որևէ կորուստ ունենալու։

—

Պէկին.—Անգլիական դեսպանը Մէծ մօրանդում ներկայացրեց չինական կառավարութեանը՝ Տիբէտը չինական հասարակապետութեան գաւառը դարձնելու ձգտման առիթով։ Մէյմօրանդումը ասում է, որ Տիբէտին ինքնավարութիւն պէտք է տրվի իր ներքին գործերում. Տիբէտի միջազգային յարաբերութիւնների համար Չինաստանը պահում է Լհասայում իր ներկայացուցիչը յատուկ պահակախմբով, բայց Չինաստանը չէ կարող Տիբէտ ուղարկել արշաւախումբ կամ անասնման քանակութեամբ զինուորներ։ Մէյմօրանդումը պայմանաւորում է նոր անգլո-չինական դաշնագիր կապելու Մեծ Բրիտանիայի կողմից չինական հասարակապետութիւնը օրինական ճանաչելու մասին։

—

Բուդապեշտ.—«Ազեստ» լրագիրը, առաջ բերելով հարաւ-ռունդարական մանեւրների նշանակութեան մասին Վիէննայից տրված տեղեկութիւնը, մանանշում է, որ իշխանութիւնները ընտրել են մանեւրի համար այդ տեղը, իբրև համապատասխանող Գալիցիայի սահմանակից Ռուսաստանի հարթութեանը, նոյնպէս և Վերին Իտալիային։

—

Նորվիչ.—Հեղեղը շարունակում է սպառնալ քաղաքին։ Ջուրը նորից բարձրացաւ։ Երկիւղ են կրում, որ մի գուցէ խմելու ջուրը և ուտեստի մթերքները սպառվեն ու համաճարակ հիւանդութիւններ սկսվեն։ 10,000 հոգի մնացել են առանց օթևանի։ Առևտուրը դադարել է։ Շատ շէնքեր փլատակվել են։ Երկաթուղային հաղորդակցութիւնը Նորվիչի հետ վերականգնված է։

—

Հոնգկոնգ.—Սաղաղկները յարձակվեցին Լաֆին և Սանշուլ մաքսատների վրա, կապտեցին եւրոպական օֆիցէրներին և տարան զէնքերն ու ռազմամթերքները։

—

Ռիո-դէ-Ժանէյրո.—Անյայտ մի անձ ատրճանակով կրակեց նախագահական պաշտօնի թեկնածու սենատոր Սոդրէի վրա։ Ամբոխը Լինչի օրէնքով պատժեց յանցաւորին։

—

Բերլին.—Դեսպան Սվերբէյեվը երէկ այցելեց Կիդերլէն-Վէխտերին, վաղը կընդունվի կայսրի կողմից և կը յանձնի իր հաւատարմագրերը։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
17 օգոստոսի

Սալոնիկ.—Սէնիցի ջարդերի առիթով Բէլգրադում տեղի ունեցած ցոյցերն ու «Սամօուպրավա» պաշտօնական թերթի տոնը ուժեղ տպաւորութիւն է գործել Թիւրքիայում։ «Ենի-Ազրը» սպառնում է Սերբիային պատերազմով, եթէ նա շարունակի իր դրգռումները։

Նովօ-Բազարի սանջակում ալբանացիները պահանջում են Թիւրք կառավարութիւնից անմիջապէս վճարել այն փողերը, որ նա խոստացել էր տալ ապստամբութեան ժամանակ աւերված տները վերաշինելու համար, և սպառնում են կողոպտել պետական դանձերը ամբողջ Ալբանիայում։

—

Բէլգրադ.—«Պոլիտիկա» լրագրի տեղով, Թիւրքերը Բիստօվացի մօտերքում կենտրոնացրել են 10,000 հոգի։ Սահմանագլխի Տուսիչ կէտում Թիւրք զինուորները սպանել են մի սերբ պահակի։

—

Բէլգրադ.—Թիւրքական զօրքերը Սէնից գալուց յետոյ լիակատար հանգստութիւն է տիրում։ Եաւոր փախած սերբերը սկսել են վերադառնալ։

ՎԼՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս, 11 օգոստոս

Նոր դահլիճին պաշտօնավարութեան հետ Թիւրքիոյ ներկայ տագնապի վախճան կը սպասուէր և իրապէս ալ բաւական նպաստաւոր քայլեր առնուեցան, սակայն կարելի չեղաւ կացութիւնը պարզել, վանդի դահլիճը կը գտնուէր բազմապիսի դժուարութեանց առջև։

Այդ դժուարութիւններէն առաջինն էր դահլիճի մէջ գտնուած անհամերաշխութիւնը։ Ներքին քաղաքականութեան մասին դահլիճը բաժնուած ըլլալով երկու մասի՝ տակաւին մինչև այսօր չկրցաւ վերջնական գոյն մը ստանալ և շարունակ մինիստրներու փոփոխութիւն կը կատարուի։

Մասնաւորապէս երբեմն իթթիհատական մինիստրներ, կապուած ըլլալով գաղտնիքներով այդ կուսակցութեան հետ, չեն ուզեր զայն բոլորովին ընկճել և անուղղակի կերպով կուզեն սիրաշահիլ այդ կուսակցութիւնը։

Հիւսէին Հիլմի փաշա՝ երբեմն իթթիհատական մեծամասնութեան ապաւինած խորքոսը՝ ամենէն աւելի կուզէր այս քաղաքականութեան այժ տալ, իրեն հետ ունենալով ուրիշ քանի մը մինիստրներ։

Ընդհակառակը դահլիճին մեծամասնութիւնը և մանաւանդ Քեամիլ ու Նազիմ փաշաները, կուզէին նախորդ ապօրէն վարչութեան բոլոր հետքը ջնջել երկրին մէջ, նախորդ երեսփոխանական ընտրութեանց միջոցին կատարուած ապօրինութեանց բոլոր հեղինակները պատժելով պաշտօնանկութեամբ։

Հետևաբար ներքին գործերու մինիստրները ձեռնարկեցին գաւառին իթթիհատական կուսակիցները պաշտօնանկ ընել։

Զիա փաշայի և Դամատ Շերիֆ փաշայի այս ձեռնարկը անհաճոյ թուեցաւ Հիլմի փաշայի, և վերջինս հակառակեցաւ։

Արդիւնքը եղաւ երկու մինիստրներուն կարճ ժամանակի մէջ իրարու ետևէ հրաժարիլը։

Սակայն անոնց յաջորդ մը գտնել կարելի չէր այս պայմաններուն մէջ, և օրէ օր հաւանական կը դառնար կաբինետին ամբողջական հրաժարումը։

Դարձեալ կարելի չէր գործ տեսնել այս պէս անհամերաշխ ուղղութեամբ։

Մենայոռի դեր մը՝ կատող Հիլմիէին՝ Հիլմի փաշան հեռացնել։

Ասիկա կատարուեցաւ։

Ասով կաբինետին ներքին անհամաձայնութիւնը վերջնելու փորձ մը եղած է, չենք գիտեր որքան յաջողութեամբ։

Կառավարութիւնը ունի, այս դժուարութիւնէն զատ, երկրին ներքին ըմբոստութեանց դժուարութիւնը։

Բումելիի վիճակը ամեն ժամանակէ աւելի ծանր է։

Ալբանացիներուն եղած զիջումները հեռատեսէ աւելի պահանջկոտ և աւելի անհանդուրժելի կը դարձնեն այս ցեղը, որ իր ըմբոստութեան մէջ կը շարունակէ տակաւին՝ հակառակ իր լիուլի գոհացում գտած ըլլալուն։

Դահլիճը՝ շրջապատուած ըլլալով ծանր դժուարութիւններով՝ պարտաւորած կը զգայ որոշ չափով զիջումներ ընել, սակայն պետութեան արժանապատուութիւնը զոհելու կողմը չէ և նոյն իսկ պահ մը ըսուեցաւ, թէ բուռն միջոցներու պիտի դիմէ։

Սակայն զսպողական միջոցներու դիմելու տակաւին չձեռնարկած՝ արտաքին ծանր ճնշումի մը երթարկուեցաւ, և ներքին տագնապին տեղի չտալու համար ամեն զոհողութիւն ընելու պատրաստ է կառավարութիւնը։

Քօչանայի մէջ իսլամ խուժանը իր բարի (11) սովորութեան համաձայն կը Հարձէ, կը թալանէ տեղւոյն բուլգարները։

Այս դէպքը ահագին գրգռութիւն առաջ բերաւ, և բուլգար կառավարութիւնը... բարեկամական դիմակի տակ կը սպառնայ Թիւրքիոյ, մինչ անդին արդէն Զերնօզօրքիա սկսած է անհանդուրժելի պահանջներ ներկայացնել և պատերազմական գործողութեանց ձեռնարկել, առանց պատերազմի Թիւրքիայէն հողաբաժին մը ստանալու յոյսով, օգտուելով Բ. Դրան յետին ծանր նեղկացութենէն։

Զերնօզօրիայի գործակատարը ամեն օր կանոնաւորաբար մեր արտաքին գործերու մինիստր Նորատունկեան էֆ.-ի կը ներկայանայ նոր սահմանագլուխի մը—անշուշտ ինչպէս մեզի կազմուած—ծրագրով և կուզէ որ զայն ընդունի օսմանեան կառավարութիւնը առանց ոչէ վերապահութեան կամ նոր քննութեան։

Նորատունկեան էֆ. կանոնաւորաբար ամեն օր կը մերժէ։

Զերնօզօրացիք սակայն ամեն օր սահմանագլուխի վրայ կառաջանան։ Բ. Դուռն հակառակ անոր որ իր արժանապատուութեան համար պարտաւոր էր պատերազմի առիթ այս պարագան իբր նեռուած ձեռնոց մը ընդունիլ և պատերազմ յայտարարել, ընդհակառակ ամեն ինչ կընէ խուսա-

փելու համար պատերազմէ, գիտնալով որ Ռումելիի Ներկայ կացութեան և Բալկանեան միւս կառավարութեանց լարուած վիճակին մէջ ոչէ պատերազմի սկզբնաւորութիւն, որ պիտի գայ աւելնալ արդէն տարիէ մը իվեր շարունակուող պատերազմին վրայ, կրնայ նոյնիսկ կործանել Թիւրքիան։

Այս արտաքին դժուարութեանց վրայ այս շաբաթ աւելցաւ նաև Աւստրիոյ արտաքին գործոց մինիստր Բերխտոլդի մեկնառաջարկը, որ ամբողջ Եւրոպան կը զբաղեցնէ և որ Թիւրքիոյ ճակատագրին վրայ մեծ ազդեցութիւն ունենալու երևոյթ ունի։

Աւստրիոյ առաջարկը ուղղակի Թիւրքիոյ ներքին գործերուն միջամտելու ձեռնարկ մըն է, որ անշուշտ Թիւրք պետական մարդոց համար հաճելի չի կրնար թուիլ։

Հետևաբար Թիւրք պետական անձերը կուզեն, փոխանակ ճնշման տակ ընդդիմելու ապակեղբոնացման դրութիւնը, ինքնաբերաբար կատարել երկրին վարչութեան համար անհրաժեշտ դատուած այդ բարենորոգութիւնը, որուն դէմ ծանր հակառակութիւններ կան Թիւրք տարրին մէջ, մանաւանդ իսլամական մասին մէջ, որ իր ձգտումներովը դեռ կը մնայ կեդրոնացման և ձուլման քաղաքականութեան կուակից։

«Թանին», որ իբր ցոյց իր հրատարակութիւնը երկու շաբաթի չափ դադրեցուց, հիմա վերսկսած է հրատարակուիլ իբր ընդդիմադիր օրգան և բուռն կերպով կը պայքարի արդի կառավարութեան դէմ։

Տեսնելով հանդերձ տիրող մեծ տագնապը, «Թանին» կը քննադատէ արդի կառավարութեան ապակեղբոնացման ուղղութիւնը, առանց ա ղրադառնալու թէ իսլամական կառավարութիւն իսկ անխուսափելիին առջև տեղի տալով՝ Եմենի արաբներու տուած էր լայն ինքնավարութիւն մը և մալիսօրներու խոստացած էր այնպիսի վարչութիւն մը, որ իսկապէս ապակեղբոնացման հիմի վրայ էր հիմնուած։

Հետևաբար հարկը կը լուծէր օրէնքը. և եթէ այսօր ալ Իսլամիզմը գտնուէր իշխանութեան վրայ, մենք կը կարծենք, թէ ինքն ալ ուրիշ ելից հնար մը չպիտի գտնէր, եթէ ոչ ընդդիմիլ ապակեղբոնացման ուղղութիւնը։

Արդի կառավարութիւնը այս զիջումներն ընելով պարզապէս փրկել կուզէ Թիւրքիան մեծ կազմալուծումէ մը, և իրականութեան մէջ առանց բաղկացուցիչ ազգերը գոհ ընելու տեղական յատուկ վարչութիւններով՝ անկարելի է վարել այս երկիրը իբր սոսկ Թիւրք պետութիւն, կազմելով միայն երկրին բնակչութեան մէկ աննշան փոքրամասնութիւնը, ինչպէս են իրականին մէջ Թիւրքերը՝ հանդէպ միւս ցեղերու։ Շարայլ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻԼԹԻՆ

ԿԵԱՆՔԻ ՑԱՒԵՐԻՑ

XV

Ուսուցչի դրութիւնը

(Մի առաջարկութիւն)

Միայն այն ազգերն ապագայ ունին, միայն այն ազգերին կարելի է պատմական կոչել, որոնք ունին նուրբ զգացողութիւն դէպի այն բոլորը, ինչ որ կարևոր է, ինչ որ անհրաժեշտ է իրենց հաստատութիւններին, որոնց նրանք թանկ են գնահատում։ Տօլստոյ

Բ.

Այժմ անցնենք ոճիկին, կամ աւելի պատշաճ է ասել՝ աշխատանքի վարձատրութեան։

Զը գիտեմ՝ պէտք է ասց լինել թէ ծիծաղեր, այնքան անծանօթ են «աշխատանքի վարձատրութիւն» բառերը ուսուցչական կեանքի լեքսիկոնում։

Երբ մշակը երեկոյեան գալիս է խաղէյինի մօտ իր աշխատավարձը ստանալու, նրան ոչ ոք չէ նկատում, թէ այդ փողը իր քրտինքի վարձը չէ. իսկ ուսուցիչը այդ մխիթարութիւնից էլ է զուրկ. նրան շպրտում են գրշները որպէս ողորմութիւն, որպէս ի զուր վճարված փող. և վճարողները համոզված են, որ իրանք «ազգասէր», «բարի», «խղճմտանքով» մարդիկ են, որ օգնում են ուսուցիչներին, սրանց ապրուստ են տալիս, ուրեմն և սրանք շնորհակալ պէտք է լինեն, նրանց ձեռքերը պէտք է համբուրեն, նրանց կեանքի երկարութեան համար աղօթք անեն, որ այդ «ազգասէրները» ողորմեցին իրանց, քաղցած չը թողեցին։

Արդար աշխատանքի, իրանց մաշված կեանքի արժանի հատուցման և ոչ մի բառ, նոյնիսկ զգացում։

«Համոզված ազգասէրներ» են մարդիկ, որոնք եթէ ազգասէր չը լինեն, կարող են չը վճարել այդ փողը, կամ իրանց համոզումներով՝ ողորմութիւն չանել։

Եւ իսկապէս, եթէ ուզենան, չեն վճարի անպատիժ կերպով ու դեռ շնորհակալութեան, գովեստի, փառաբանութեան կարժանանան իրանց հասարակական կեանքին զոհած լինելուն համար։

Շատ տեղին կը լինի, եթէ առաջ բերեմ իմ ականատես եղած այդպիսի ազգասէրներից մէկի արարքը։

Երկաթե դպրոց էր մի քիչ թէ շատ օրինաւոր գիւղում, երեք բաժանմունք ունեցող, մօտ 60 աշակերտ-աշակերտուհիներով. և հրաւիրված էր մի վարժուհի, երեկայեցէք, 250 բուբլի վարձատրով։

Որպէս ճանապարհածախք իր իսկ ոճիկից նրան 20 բուբլի փող են ուղարկում։ Վարժուհին, մի նորաւարտ, գալիս է, ի հարկէ, իր վառ երազներով։ Առաջին ամսի վերջերին նորից մի 10 բուբլի է ստանում. իսկ այնուհետև և ոչ մի կոպէկ, չը նայած բազմաթիւ դիմումներին։ Եւ երեկայեցէք, խեղճ օրիորդը ստացած 10 բուբլով (20-ը՝ դեռ չեկած՝ ծախսել ու ճանապարհածախք էր արել) պէտք է ապրէր գիւղը մինչև երբ, մինչև յունվար։

Հացը ապառիկ, բոլոր ուտելեղէնները ապառիկ, նոյնպէս շորեր լուանալը ապառիկ. դէ էլ ծվ կը տար, ծվ կը հաւասար, մանաւանդ երբ պարոն հոգաբարձուն ամեն տեղ ասում էր, թէ վարժուհու ոճիկը ամսէ-ամիս «առանց մէկ օր էլ ուշացնելու» վճարել է։

Անելանելի դրութեան մատնված վարժուհին էլ չը գիտէր ինչ անել, հարիւրաւոր «փող չը կայ», «սպասիր» և այլ այսպիսի բառեր։

Այլ էր, եթէ իսկապէս փող չը լիներ. բայց ոչ թէ վարժուհու ոճիկը, այլ մի երկու այնքան էլ գուցէ հէնց կանխիկ լինէր։

Զրօրինեաց տօներին փող չունենալուն պատճառով խեղճ օրիորդը զրկվում է տուն գնալուց։ Այդ օրերում ես անցայ այդ գիւղը. նա պատմեց ինձ, խնդրելով մի հնար անել։ Ես ծանօթ էի հոգաբարձուին, ուղղակի դիմեցի նրան. սկզբում ինձ էլ նա իր սովորած ընդհանուր բառերով պատասխանեց, բայց երբ սպառնացի դատարանի դիմել և համոզվեց, որ անշուշտ կը դիմեմ, խոստացաւ մի քանի ժամից յետոյ վճարել։ Ինչպէս երևում է, նա՝ օգտվելով օրիորդի թուլութիւնից, որ չէ կարողանում իր պահանջը ուղղակի ուլտիմատումի ձևով առաջարկել, դպրոցի փողը շահեցնում էր իր օգտին՝ բուբլուն մէկ բուբլի տոկոս վերցնելով։

Հետևեալ օրը տեսնելով ինձ, իբր դառնացած սրտով գանգատվեց. «Ի՞նչ հպարտնա էլէ էդ վարժուհին. մի անգամից տասը թումման փող համբարեցի առաջը, մի ըսկի շնորհակալութիւն էլ չասաւ. դէ արի սրանից եղը ազգի համար մտածի, ուսումնարան պահի»։

Հա, հա, կարծէք իր իսկ գրպանից էր տուել։

Եւ այդ դրութեան մէջ է ոչ թէ մէկը, երկուսը (երջանկութիւն կը լինէր), այլ հատարեա մեծագոյն մասը։

Ամեն տեղ աշխատում են, որ էժան վարձեն ուսուցչին. այդ բանից զերծ չեն նաև մեր ազգային առաջադիմութեանը, կուլտուրային նուիրված հիմնարկութիւնները, իրանց գործիչների ազգասէրն (sic) ձգտումներով։ Այդ մենք գիտենք փաստօրէն։

Քարը գլուխները. գոնէ այդ չնչին վարձատրութիւնը օրինաւոր կերպով վճարվի։ Այդ էլ չը կայ։ Այսօր մէկ բուբլի, տասօրից յետոյ դարձեալ մի այդքան, մէկ ամիս 5 բուբլի, մի այլ ամիս 10 և այլն՝ այդպէս մինչև մայիս, երբ գոնէ յոյս կայ ստանալու մնացեալ ոճիկը։ Բայց ի զուր մտածումները շատ հեռու են գնում։

Մայիսի վերջին ոտքով խփում, դուրս են շպրտում դպրոցից, ու շատ անգամ նրան հասանելիք մի քանի տասնեակ բուբլիները մնում են գլուխներին վայ տալով։

Ու գնում է ուսուցիչը իր քրքված անդրավարտիկով, քաղցած փորով քաղաքների փողոցները չափչփելու, մինչև մի «ազգասէր» նրան տեղ կը տայ։

Արշալոյս Տ.Բ. Յովհաննեան

Օրդուբաթ

ԲՕՐԺՕՄԻ ԳՆԱՑՔԻ ԽՈՐՏԱԿՈՒՄԸ

Ականատեսի տպաւորութիւնները

Ինչպէս երէկ արդէն հաղորդվեց, օգոստոսի 17-ի յոյս առաւօտ ժամը 3-ին, Գօրի կայարանի մօտ խորտակվեց Բօրժօմից Թիֆլիս եկող № 718 գնացքը, որը դուրս էր եկել Բօրժօմից գիշերվայ ժամը 12½-ին։

Մենք, ճանապարհորդներս, միամիտ կերպով տեղաւորվել էինք և հանգիստ քնել։

Դժուար է նկարագրել այն պատկերը, որը ներկայացաւ մեզ, ականատեսներիս, գնացքի խորտակումից յետոյ։

Ցանկարծ ամենքս զարթնեցինք խիստ ցնցումից և դեռ աչքերս չը բացած, գլխներիս թափվեցին վերևում դարսած պայուսակները և զանազան իրերը. իսկ վերևում քնածներից շատերը թափվում էին տատակեն մոտ. եամ նեռոեկ նստառաններուն պատկածների վրա։ Առաջին միտքը, որ անցաւ մեր գլխում կայծակի արագ թեամբ, դա այն էր, որ գնացքը խորտակվեց։

Ամենքը միաժամանակ վազեցին դէպի լուսամուտները և դռները, սակայն մութ լինելով՝ ոչինչ չէր կարելի տեսնել, և որովհետև վագոնները միմեանց ճաճռում էին, ուստի միամտեցինք։

Զանցած մի քանի բոպէ, յանկարծ լսեցին ձայներ. «Ազատեցէք, այրվում ենք»...

Արդէն դժուար է նկարագրել, թէ ինչ կատարվեց այդ ձայներից յետոյ. լաց, կոծ, ճիչ կանանց, երեխաների, տղամարդկանց միասին խառնվեցին. ամենքը վազում էին ժամ առաջ ազատել փորձանքից, գուցէ և մահից։ Սկսվեց հարայ-հրոց և անկարգ փախուստ գնացքից. որը հագուստով, որը կիսահագնված վազում էին դէպի դաշտը... Հեռուից արդէն երևում էր ահագին կրակը։

Թեամբ հոգալու խորտակումները կարելի եղածին չափ անհարին դարձնելու։

Ուսանող Արամ Մարուքեան

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

XXI

Մեր հայերիս մէջ հազիւ թէ գտնվի մի գրագէտ անձնաւորութիւն, որը երբևիցէ գրիչ չը լինի վերցրած թղթակցութիւն, յօդուած, պատմուածք կամ պիէսա գրելու համար։

Այդ բանով ի հարկէ ուրախանալ միայն կարելի է, որովհետև եթէ մի ազգի կուլտուրական առաջադիմութեանը կարելի է չափել նրա մէջ գոյութիւն ունեցող թերթերի և լոյս տեսնող գրքերի քանակութեամբ, այդ դէպքում պէտք է մտածել, որ հայ ազգը կուլտուրական զարգացման բարձր, նախանձելի աստիճանի վրա է գտնվում։

Բայց այդ միայն քանակի տեսակէտից։

Իսկ որակի։

Ես չեմ խօսում ի հարկէ թերթերում և պարբերականներում տեղ գտնող նոր գրողների, դրամատուրգների մասին, որովհետև այսպէս թէ այնպէս նրանց մտքի արտադրութիւնները անցնում են որոշ ֆիլտրի միջով և աբսոլիւտ անպէտք գրուածքները շատ հազիւ կարող են տեղ բռնել պարբերականներում, այլ այն գրողների և նրանց երկերի մասին, որոնց նիւթական ապահովութիւնն ու միջոցները թոյլ են տալիս առանձին գրքով հրատարակելու իրանց երկերը կամ թէ բեմ հանելու։

Ես գլխաւորապէս կանգ եմ առնում մեր նոր դրամատուրգների վրա։

Թատրօնական լամպայի լոյսը և հանդիսատես հասարակութեան ծափահարութիւնները մի ձգողական ոյժ են ներկայացնում մեր գրողների համար։

Եւ մեր մէջ այժմ ամեն մի՝ տեղից վեր կացողը աշխատում է դրամա գրել և բեմ հանել այն։

Դրամա է գրում և՛ պատմաբանը, և՛ հրապարակախօսը, և՛ վիպասանը, և՛ թղթակիցը, որի մի երկու թղթակցութիւնները տեղ են գտել որևէ գաւառական թերթում։

Կեանքի ու բեմի հետ միանգամայն անծանօթ լինելով, չը գիտենալով նոյն իսկ, թէ ի՞նչ տարրերից պէտք է կազմված լինի դրաման, շատ քիչ ծանօթ լինելով, շատ անգամ էլ նոյն իսկ անծանօթ այն շրջանի մարդկանց հոգեբանական առանձնայատկութիւնների հետ, որոնց կեանքը նա իր դրամայի նիւթ է դարձնում, տեղից վեր կացող ամեն մի պատանի գրիչ է վերցնում ձեռքը, և ահա դրաման պատրաստ է։

Թոյլատրութիւն ստանալը հեշտ է. հարկաւոր է միայն 1 ր. 50 կ. մարկա կնքոցնել դրամային, և ցենզուրան արդէն թոյլ է տալիս նրան բեմ հանելու։ Այնուհետև արդէն սկսում են խաղալու պատրաստութիւնները։

Կանոնաւոր դրամատիկ խմբերը ի հարկէ որոշ ընտրութիւններ են անում և ամեն պիէսա յանձն չեն առնում խաղալու, բայց չէ՞ որ այդ դէպքում կան անհատ դերասաններ, որոնք նիւթական շահ ունենալու համար կը խաղան ինչ որ ուզենաք և, վերջապէս սիրողներ, որոնցով կարելի է պիէսան բեմ հանել։

Հոգ չէ թէ այդ սիրողները միանգամայն անպէտք լինեն, հոգ չէ թէ նրանք հայերէն անգամ չը գիտենան և պիէսան տապալեն. չէ՞ որ վերջապէս պիէսան կը խաղացվի, երիտասարդ դրամատուրգի անունը տպա-

զգում իրան կապված Նոր-Նախիջևանի հետ։ Նրա մտքերը, խոհերը հեռու էին, Արարատի պատանդի մօտ Էջմիածին։ Բայց Նրա «սին փառքը» «սիրելի ազգը» չը կարողացաւ կատարել...

Կաթողիկոսը Գամառ-Քաթիպայի համար ազգի պետն էր։ Սկզբունքով նա հակառակ էր, որ կաթողիկոսի անձը վէճերի, բանակռիւների առարկայ լինի։ Քանի որ ազգի միայն չնչին մասը կաթոլիկ է և բողոքական, Գամառ-Քաթիպան դժգոհ էր, որ շատ անգամ հայ կաթոլիկների և բողոքականների խաթրու մեր հրապարակախօսները նուաստացնում են մեր կաթողիկոսների նշանակութիւնը։ Իսկապէս դա մի խոշոր սխալ է և ծանր յանցանք, ասել թէ կաթողիկոսը միայն եկեղեցու պետն է, աւելի ոչինչ։ Մինթէ դրօշակը լաթ է և փայտի կտոր։

Կաթողիկոսը մեզ համար մի յատուկ դրօշակ է՝ ազգի ամբողջութեան, միութեան գաղափարի։ Նա մեր ընտրեալն է։ Նա մեր պետն է։ Կարելի է վիճել, որ նրա իրաւունքները մեծ չեն։ Բայց ջոկ բան է իրաւունք և ջոկ բան է հասկացողութիւն։

Ազգի հասկացողութեան տեսակէտից, կաթողիկոսը այն անհերքելի ոյժն է, որ միացնում է, ձուլում ամբողջ ազգը։ Թող ազգ ասելով ես անգամ միայն լուսաւորչականներ հասկանամ, ինչ փոյթ, քանի որ ոչ-լուսաւորչականները չնչին տոկոս են կազմում։ Նկատեցէք, որ Գամառ-Քաթիպան երբէք հակառակ չէր մեր կաթոլիկ և բողոքական եղբայրներին։ ընդհակառակը նա համարձակ քարոզում էր, որ ազգը հարկաւոր չէ բաժանել յանուն հաւատոյ («Մ՞վ է հայը»), բայց նա պահանջում էր, որ կաթողիկոսը ազգի պետը ճանաչվի... Երբ ազգի կամքին հակառակ ընտրվեց Մա-

*). Տես «Մշակ» № 181.

կար կաթողիկոսը, Գամառ-Քաթիպան առաջինը խոնարհվեց այդ ընտրութեան առաջ և առաջինը շնորհաւորեց նրա ընտրութիւնը... Բանաստեղծը չը սխալվեց։ Նա շատ հակառակ էր Խրիմեան Հայրիկի ընտրութեան, որին ի մօտոյ կը ճանաչէր, բայց երբ ընտրվեց Հայրիկը, բանաստեղծը՝ արդէն հիւանդ՝ դարձեալ հնազանդվեց, որպէսզի կաթողիկոսութեան գաղափարը չը տուժէ...

Քանի տարիներ անցան, որ Գամառ-Քաթիպան մեռաւ, բայց նրա երգերը չեն կորցրել իրանց հմայիչ ոյժը և թարմութիւնը։ Եղան յիմար փորձեր՝ մօտենալ նրան յայտնի վարդապետութիւնների չափերով և նսեմացնել նրա անունը, որովհետև նա չէ գրել մշակների մասին. բայց այդ փորձերը փորձեր մնացին։ Գամառ-Քաթիպան բարձր կանգնած է այսօր մեր առաջ, իսկական բանաստեղծ, բանաստեղծ «անհասանելի կամօքն Աստուծոյ», բանաստեղծ ոտերից մինչև գլուխ... Իր գեղեցմանից այսօր, ինչպէս առաջ, երբ կեանքով լի էր, նա կարծես մեզ ասում է, թէ մեխակն էլ ծաղիկ է, հայն էլ մի մեխակ, հասկացէք հային՝ որ սիրէք, և սիրեցէք՝ որ հաւատաք...

Հասկանալ, սիրել, հաւատալ.

Ահա ինչ է մեզ հարկաւոր, որ մեր մայր, մութ, անվերջ գիշերը, ուր կարծես լոյսի մի շող չը կայ ապագայ մեր ուղին լուսաւորելու համար, վերջանայ, լուսանայ և գայ գեղեցիկ, պայծառ, ցանկալի, ուրախալի ցերեկը, հայի ցերեկը...

Գր. Զալխուշեան

Մօնտրէ

հրդեհից առաջացած. մենք սկզբում չէինք հասկանում թէ ինչ վտանգի էինք ենթարկված և կամաց-կամաց հանգստացել էինք, երբ նորից լսվեցին ձայներ. «Փախէք հեռու, պայթելու է շոգեմեքենան»։

Նորից սկսվեց ահաբեկիչ փախուստը և ով որտեղ հնարաւոր էր պահվում էր ազատվելու համար և բոպէ առ բոպէ սպասում էին պայթումին. իսկ կրակը գնալով մեծանում էր և արդէն սպառնում էր ճարակ դարձնել ամբողջ գնացքը։

Խորտակման տեղը Գօրի կայարանից ընդամենը մօտաւորապէս կէս վերստի վրա է, ուստի կայարանից օգնութեան հասան ոստիկանութիւնը, ժանդարմերիան և կայարանի կառավարչական մարմինը։

Արդէն կողմնակի օգնութիւնով և կայարանից հասած ծառայողների շնորհիւ սկսեցին գնացքի վերջից միմի վագոն բաժանել և հրդեհի վտանգից ազատել։

Բանը նրանումն է, որ գնացքը խորտակվելուց անմիջապէս յետոյ սկսվեց հրդեհ շոգեմեքենային կից բաղադրի վագոնում և տարածվեց նաև հարևան 3-րդ կարգի վագոնում, որոնք կատարելապէս այրվեցին։

Մինչև ծառայողների օգնութիւնը, ճանապարհորդներն ևս՝ միամտելով որ պայթումը այլևս չի առաջանայ՝ սկսեցին օգնել վագոնները հրդեհից ազատելուն. միևնոյն ժամանակ Գօրի քաղաքից օգնութեան հասան հրդեհաշէջները և միահամուռ ոյժերով հնար եղաւ լափոխ կրակը կամաց-կամաց հանգցնել։

Մի երկու ժամից յետոյ մեզ ճանապարհորդներիս յետ տարան Գօրի կայարանը, ուր պարզվեցին գնացքի խորտակման պատճառը և հետևանքները։ Գնացքը Գօրուց դուրս գալիս ալաքավարուղեփոխը գնացքը փոխանակ գծի վրա դարձնելու, սխալմամբ ուղղել է դէպի փակ վերջագիծը (տուպիկ), և այդպիսով գնացքը դատապարտել կորուստի։ Կանգնած պահապան ալաքավարը այնքան է շփոթվել, որ նոյն իսկ դողդողալուց՝ զգուշացնող փողն անգամ հազիւ լսելի կերպով է փչելիս եղել։

Գնացքը իր ամբողջ թափով խփվել է փակ վերջագծին, որը փշրվելով ճանապարհ է բացել շոգեմեքենային գլորվելու մի երկու սաժէն բարձրութիւնից։ Սպանված են մեքենավարը, նրա օգնականը և մեքենավարի որդին։ Վիրաւորված են երկու կօնդուկտորներ և ճանապարհորդներից մի քանիսը թեթև կերպով, իսկ շատ-շատերը, ի հարկէ, խիստ վախեցել են։

Առաւօտեան երբ նոր գնացքով մեզ ճանապարհեցին Գօրիից Թիֆլիս, խորտակման տեղը կանգ առանք և միայն լոյսով տեսանք թէ որպէսզի սոսկալի վտանգից ազատված ենք եղել բոլոր ճանապարհորդներս շնորհիւ լոկ պատահմունքի. շոգեմեքենան ցած էր գլորված մի երկու սաժէն հողաբլուրից, վագոնները այրված-ջարդված և, շնորհիւ հրդեհաշէջների, կրակը հանգցված։

Մեքենավարը, ինչպէս ասում են, առաջին անգամն է եղել վարելիս մարդատար գնացքը և իր ծանօթների սէրն ու յարգանքները վայելելիս։

Ճանապարհին արդէն պատահեցինք Թիֆլիսից օգնութեան հասնող սանիտարական գնացքին։

Մենք ամենքս շատ գոհ էինք, ի հարկէ, խորտակումից յետոյ այդքան թեթև վնասներով ազատվելով. բայց չէ՞ որ կարող էր ճանապարհորդներիս մեծ մասը կոտորվել։

Արդեօք ժամանակ չէ՞ կատարեալ լրջու-

ԹՈՒՐՔԻՑԻ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագուի աղմկոտ կեանքից յետոյ մեզ վրա խիստ հաճելի տպաւորութիւն թողեց Պետրօպավլովկայի անդորը և անաղմուկ կեանքը։

Պետրօպավլովկան գտնվում է ճիշդ այնտեղ, ուր երկու մեծ գետեր՝ Արաքսն ու Կուրը՝ գիրկընդխառնվում են իրար հետ։

Գիւղի տեսարանը բաւական գրաւիչ է ու սիրուն։ Նա հիմնված է 1888 թուականին և ունի 74 հիմնական տուն՝ բաղկացած գաղթական ռուս գիւղացիներից։

24 տարվայ ընթացքում գիւղն արել է չը տեսնված ու անհաւատալի առաջադիմութիւն կուլտուրայի ճանապարհի վրա։ Դրան նպաստել են մի շարք հանգամանքներ։ Նախ այն՝ որ նա գտնվում է Բագու-Սալիան-Ելիսաւետպոլ ջրային բաւական բանուկ ճանապարհի վրա։ Երկրորդ այն՝ որ այնտեղ մշտական ապրում են հաշտարար դատաւորն ու Զեվադի գաւառի առաջին մասի պրիստաւը։ Երրորդ այն՝ որ ամենայն հինգշաբթի այնտեղ լինում է մեծ բազար և այլն և այլն։

Այսօր Պետրօպավլովկան այլևս 74 տնից բաղկացած ռուսական մի փոքրիկ գիւղ չէ, այլ մի մեծ աւան է, գրեթէ նման մեր գաւառական փոքրիկ քաղաքներին իր առտնին կեանքով, իր առևտրով և իր բնակիչների նիստ ու կացով և շարժ ու ձևով։ Ունի մօտ 250 մեծ և փոքր կրպակներ և արհեստանոցներ, հիւրանոցներ, հիւանդանոց, դեղատուն, պօստ-հեռագրատուն և բամբակ ու քունջութ զտելու գործարաններ։

Ներկայումս նրա բնակիչների մեծ մասը կազմում են Թուրքերը, որոնք գիւղի միջի ազատ հողաբաժինները ձեռնտու պայմաններով ռուս գիւղացիներից կապալով վերցնելով՝ նրանց վրա զանազան շինութիւններ են շինում ու վարձու տալիս։ Թուրքերը մեծ մասամբ զբաղվում են առևտրով։ Կան նաև բաւականաչափ հայեր՝ ժողովված այնտեղ Ղարաբաղից, Շամախուց, Գանձակից և ուրիշ տեղերից։ Հայերը զբաղվում են առևտրով, արհեստներով և զանազան ծառայական գործերով։ Ընտանիքաւոր հայեր խիստ քիչ են Պետրօպավլովկայում. նրանք վերջերս են միայն սկսել երևալ այնտեղ։

Տիրող տարրը, թէև փոքրաթիւ, ռուս գիւղացին է։ Ռուսները, յայտնի է, կուլտուրան ընդգրկում են սիրով և արագ, քան հայ և Թուրք գիւղացիները։ Շնորհիւ ռուսների կուլտուրասիրութեան, Պետրօպավլովկան, ինչպէս ասացինք, գտնվում է անընդհատ առաջադիմութեան ուղիի վրա ու շարունակ բարգաւաճում է, ունենալով իր տրամադրութեան տակ անհրաժեշտ դրամը։ Պետրօպավլովկան բաւական խոշոր հասարակական գումար ունի տնտեսած իր համար, այն է՝ աւելի քան 50,000 բուբլի։ Հասարակական գումարը ստացվում է գիւղում խմիչքը կապալով տալուց և մասնաւոր բազարից։ Խմիչքի առևտուրը, որ ոչ հեռու անցեալում կապալով է տրված եղել սոսկ չնչին գումարով՝ մէկ-երկու հարիւրով, ներկայումս տալիս է գիւղին տարեկան մօտ 6330 բուբլի մի գումար, որից, ինչպէս լսեցինք, ռուսները դեռ ևս գոհ են, շատ ախորժակ ունենալու պատճառով։

Բազարը կատարվում է շաբաթական մէկ օր՝ հինգշաբթի օրերը։ Բազարի համար յատկացված երկու ընդարձակ հրապարակներից մէկի վրա Թուրք տարրն է կատարում իր առևտուրը, իսկ միւսի վրա՝ քրիստոնեայ և մահմեդական խառն ազգաբնա-

զրված կը լինի աֆիշների վրա, թերթերում յայտարարված, որ այս-ինչ օրը կը խաղացվի երիտասարդ հայ դրամատուրգ այս-ինչի այս-ինչ պիէսան, և վերջապէս բեցենզենտները կը խօսեն պիէսայի մասին. լաւ թէ վատ, այդ ուրիշ հարց է, բայց յամենայն դէպս կը խօսեն։

Եւ այդ էլ բաւական է մեր երիտասարդ դրամատուրգներին։

Մի անգամ մի պարսիկ զինուոր պարծենում էր իր ընկերների մօտ, թէ շահը իր հետ երես առ երես խօսել է. և երբ հարցնում են, թէ ինչ է ասել, նա հանգիստ պատասխանում է.

— Շահը ասաց՝ «յիմար, մի թէ չես կարողանում ուղիղ կանգնել»։

Եւ այդ պարսիկ զինուորը երջանկութեան էր հասել, որ շահը խօսել է իր հետ, հոգ չէ թէ հայհոյել է։

Այդպէս էլ մեր դրամատուրգները, ի հարկէ չակերտաւոր։

Այս բոլորը առիթ տուեց ինձ գրելու «Մշակի» վերջին համարներից մէկում տպագրված մի բեցենզիա Բալախանում խաղացված մի նոր պիէսայի մասին։

Ես ճանաչում եմ այդ պիէսայի հեղինակին. 19—20 տարեկան մի պատանի, որը դեռ կեանքի հետ շատ քիչ ծանօթութիւն ունի, որը անպայման ընդունակ տղայ է, բայց որին վերջ ի վերջոյ կարող է փչացնել իր բռնած ընթացքը։

Փոխանակ իրան ծանօթ կեանքից փոքրիկ պատմուածքներ գրելու, որը, ես հաւատացած եմ, նրան փայլուն կերպով կաջողվի, և դրանով զարգացնելու իր ընդունակութիւնները, նա առաջին իսկ քայլերից ձեռնարկել է դրամաներ գրելու։

Ես կարդացել եմ այդ դրամաներից մի քանիսը, որոնցից մէկին էլ վերջին ժամանակներս սիրողները խաղացին Բալախանի, ու նրա միջով կարմիր թելի պէս անցնում է մի բան. իսկոյն նկատվում է, որ նա դեռ ես ծանօթ չէ այն կեանքի հետ, որը իր դրամաների մէջ դուրս է բերում, և այդ պատճառով էլ նրանք չափազանց ձանձրալի են դուրս գալիս։ Նրանց մէջ դուք միայն 1—2 իսկական, լրացրած տիպ կարող էք գտնել, և այնպիսի տիպեր, որոնք շատ մօտ ծանօթ են նրան, զուցէ և իր կեանքից են. իսկ մնացած տիպերը միանգամայն շինծու, կեղծ և անհնարամիտ։

Եւ հէնց այդ բանը պարզ ապացոյց է, որ պարոնը դեռ ես անփորձ է, կեանքի չարն ու բարին դեռ չը տեսած և իր հերոսների հոգեբանութեան մէջ մանելու անընդունակ։

Եւ այդ պարոնին ու նրա նմաններին «Մշակի» բեցենզենտի պէս մենք մի խորհուրդ կը տայինք. թողնել առ այժմ դրամաներ գրելը, գրել պատմուածքներ, պատկերներ իրան շրջապատող կեանքից, մինչև որ կեանքի փորձը ապագայում ընդունակ կը դարձնէ նրան դրամաներ գրելու։

Բայց բարեկամական այդ խորհուրդները երբեմն նշանակութիւն կունենան մեր «երիտասարդ հայ դրամատուրգների» համար։

Վ. Թումանեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Վեհի ժամանումը Մայր-Սբոռ

Վաղարշապատ, 14 օգոստոսի

Այսօր տեղումս տարածվեց, որ երեկոյեան ժամը 6-ին Վեհափառը Բիւրական ամարանոցից գալու է։ Երեկոյեան ժամերգութիւնը սովորականից շուտ եղաւ։ Ժամը 5½-ին տաճարի «Երրորդ» կոչված զանգը յայտնեց միաբանութեանը և ժողովրդին Վեհափառի մօտալուտ գալուստը։ Զանգի ձայնին միաբանութիւնը, գլուխ ունենալով Սուքիաս արքեպիսկոպոսին, ընդառաջ գնաց առանց շուրջառի ու խաչվառի մինչև Վաղարշապատի հրապարակի դարպասը։

Վեհափառը կառքից իջաւ, ընդունելով գաւազանը։ Թափորը առանց երգեցողութեան, միայն զանգակների զողանջիւնի տակ, առաջնորդեց Վեհին եկեղեցի, որտեղ Հայրապետը Իշման Սեղանի առաջ ծունկի եկած, համբուրեց խաչն ու աւետարանը, աղօթեց, և ապա նոյն թափորը տարաւ Վեհին վեհարան։

Կաթողիկոսին ընդառաջ էին գնացել Երևանի թեմի առաջնորդական փոխանորդ Սուրէն եպիսկոպոսը, սինոդի անդամներ Բարգէն և Մատթէոս վարդապետները, գաւառական Բագրատ վարդապետը, խաչակիր Սիսն վարդապետը և Պետական Դումայի անդամ Յ. Սաղաթելեանը։

Թէ դարպասի մօտ և թէ վանքի բակում հաւաքվել էր բաւականին երկար բազմութիւն։

Վեհափառի առողջութիւնը կատարեալ էր։ Վ. ք. Աղաղաղեան

—

Լիճի գիւղական ծխ. դպրոցը

Դաշտուն գիւղ (Զանգ. գաւ.), 6 օգ. 1908—9 թուին, շնորհիւ «Արամազդ» ընկերութեան, բացվեց ամբողջ Զանգեզուրի գաւառում մօտաւորապէս 15—16 ուսումնարան, որոնցից մէկին էլ մեր շրջանինն էր. մեր շրջանի այդ դպրոցը բացվեց Լիճք գիւղում, և նրանից օգտվում էին Լիճք և Դաշտուն գիւղերը միայն։

Այժմ ուսումնարանը ունի IV բաժանմունք և մօտ 55—60 աշ.-աշակերտուհի, որոնցից հաղիւ 10 աղջիկ լինի։

Տարէ-ցտարի աւելանում է մեր դպրոցի աշակերտների թիւը. չը նայած որ յիշեալ երկու գիւղը իրար մօտիկ են, բայց ձմեռվայ օրերին շատ դժուար է լինում դաշտունեցոց համար գնալ-գալը։ Այս վերջին գիւղի աշակերտներից նրանք, որ ունեն Լիճք գիւղում բարեկամներ, նրանք վատ եղանակներին մնում են այնտեղ, իսկ մնացեալները ստիպված են լինում կամ վերադառնալ իրանց գիւղը կամ մնալ ուսումնարանում։

Տեղիս հասարակութիւնն ընդհանուր առմամբ գոհ է մեր դպրոցի ուսուցիչ Եսայի Վարդանեանից։ Սա մի եռանդուն և անձնուէր գիւղական հասարակական գործիչ է։

Մեր դպրոցը, որ ցարդ ունեցել է մի ուսուցիչ, այժմ, եթէ յիշեալ Ե. Վարդանեանի ծրագիրն իրականանայ, կունենայ երկուսը։ Ուսուցիչ Վարդանեանն իր ծրագրի աջողութեան համար զոհաբերում է իր համեստագոյն ռոճիկից 50 ր. յօգուտ երկրորդ ուսուցչի։ Նա վերջերս ուղևորվեց Գանձակ և Բագու, այն տեղերի մեր հայ մագիւղացիների օժանդակութիւնը ապահովելու նպատակով իր ծրագրի կատարման համար։

Կասում ենք, որ բազուբանակ Ա. Առաքելեանը խոստացել է Ե. Վարդանեանին յօգուտ մեր ուսումնարանի 30 ր., եթէ ուսուցիչը համաձայնի մեր գիւղացի 30—40 տարեկան երիտասարդներին գրել-կարդալ սովորեցնել՝ պարապելով նրանց հետ շաբաթական երկու անգամ։

Մենք չենք կասկածում, որ օտարաբնակ մեր համագիւղացիները եթէ իրանց բաժին նուէրները չը զլանան յօգուտ դպրոցի, այդ դէպքում մեր ուսուցչի օգտակար ծրագիրն աւելի քան կապահովվի գլուխ բերել։

Մակ. Զաքարեան

—

Ռնբրացիկ կեանքը

Զաքաթալա, 8 օգոստոսի

Ամսիս 6-ին ծխ.-դպրոցի դահլիճում կայացաւ ընդհ. ծխ. ժողով։ Նախագահ ընտրվեց Ա. Անիեանը, քարտուղար՝ Ա. Ստամբոլցեանը։ Ժողովը ի նպատի ունենալով երեցփոխի՝ իր պաշտօնին անհամապատասխան լինելը՝ հրաժարեցրեց նրան։

Միևնոյն օրը Աստ.-Խարազեանը իր խմբով և սիրողների մասնակցութեամբ տուեց մի ներկայացում։ Ներկայացրին «Խարդաւանք և սէր» ողբերգ. 5 գործ., հեղ. Շիլլերի։ Խաղը անցաւ միջակ։ Սիրողները իրանց դերերը լաւ չէին սովորել։ Դանլիճը համարեա կիսով չափ դատարկ էր։

Նուխում նորերս մի ռուս գիմնազիստ, 16 տարեկան, ինքնասպանութիւն գործեց։ Պատճառը անյայտ է։

Ամսիս 2-ին՝ Ալէքսան Գասպարեանը տրճանակի հետ անզգոյշ վարվելուց վիրաւորվեց։ Դժբաղդը երեք օր ապրելուց յետոյ վախճանվեց երիտասարդ հասակում։

Նուխում երկար երաշտից յետոյ, երէկ տեղաց անձրև, որից եղանակը բոլորովին փոխվեց։ Արտաշէս Մնացականեան

—

Կօկանդի հայ գաղութի համայնական գործերից

Կօկանդ, 10 օգոստոսի

1911 թ. Կօկանդի հայ գաղութը ձեռք բերեց աղօթատան համար սեփական շինութիւն, մինչդեռ՝ մինչ այդ ժամանակ ժամերգութիւնը կատարվում էր վարձովի տան մէջ։

Հոգ. նախագահ ծխատէր Ն. ք. Աբրահամեանցը աղօթատունը պատրաստվելուն պէս հրաւիրեց խմբապետի պաշտօնով ուսուցիչ Կ. Ադամեանցին, որը թէ պէտք է եկեղեցու համար քառաձայն խումբ պատրաստէր և թէ պաշտօնավարէր դպրոցում։

Ադամեանցը գալով Կօկանդ՝ նախ կազմակերպեց քառաձայն խումբ երեկոյթի համար, որը տրվեց անցեալ հոկտեմբեր ամսին տեղիս հասարակական ակումբում, որից ստացվեց մօտ 1000 ռուբլի զուտ արդիւնք աղօթատան և դպրոցի օգտին։

Երեկոյթը տալուց յետոյ Ադամեանցը պիտի պատրաստէր քառաձայն խումբ պատարագի արարողութեան համար, բայց այդ նրան չաջողվեց։ Նա ստիպվեց հրաժարվել իր պաշտօնից և հեռանալ քաղաքից։ Այդ պատճառով և 1911 թուին Կօկանդի հայ հասարակութիւնը զրկվեց քառաձայն խումբ ունենալուց։ Աղօթատունը ստիպված եղաւ կրկին եօլա գնալ մի տիրացուով։ Եւ որովհետև պատարագը միմիայն մի տիրացուով անկարելի էր մատուցանել, ուստի պատարագի համար դէս ու դէն էին ընկնում, մի կերպ մէկին ճարում. այնպէս որ մի տիրացուն դպրութիւն էր անում, իսկ միւսը՝ սիրող-տիրացուն սպասաւորում էր սեղանում. շատ պարզ է, որ մենակ մի հոգուարած դպրութիւնը լաւ տպաւորութիւն թողնել չէր կարող, և այդ իսկ պատճառով ժողովուրդը դադարեց եկեղեցի յաճախելուց։

Մխատէր քահանան և երեցփոխը նկատեցին, որ ժողովուրդը գնալով սառչում է եկեղեցուց, ուստի անհրաժեշտ գտան, ինչպէս էլ որ լինի, այս տարի ունենալ եկեղեցու համար քառաձայն խումբ։ Հոգաբարձութիւնը հրաւիրեց աւագ ուսուցչութեան և խմբապետութեան պաշտօնով Սամարգանդի ուսուցիչ Աբշաւիր Տէր-Մկրտչեանցին 1100 ր. ռոճիկով։

Ցիշեալ ուսուցիչը արդէն սկսել է կազմակերպել քառաձայն խումբը։

Կօկանդի հայ գաղութը այս 3 տարվայ ընթացքում միջին թւով 120 տուն ծուխ ունի (գաղութը), որը կարողացաւ ունենալ և՛ սեփական աղօթատուն, և՛ ուսումնարան, և՛ քառաձայն խումբ։

Տեղիս թատերասէրների խումբը մտադիր է սեպտեմբերին ներկայացնել «Վերածնված» պիէսը յօգուտ աղօթատան և ուսումնարանի։

Պ. Մանուչարեան

—

ԴԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Այսօր, կիրակի, օգոստոսի 19-ին կէսօրին, արտակարգ գնացքով Թիֆլիս է ժամանելու Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ Կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը։ Դիմաւորելու համար ընդառաջ է գնացել Անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ գէն.-մայոր բարոն Ե. Բոսպը։ Կոմսի գալուստի միջոցին կայարանը զարդարված կը լինի զրօշակներով և կանաչով։

✦ Ոստիկանական դեպարտամենտը, ի նկատի առնելով որ յուլիսի 1-ին վերջացել է Ռուսաստանում ապրող թիւրքաձայնների անցագիր-վկայականների ժամանակը, Պետերբուրգի թիւրքական դեսպանի միջնորդութեան համաձայն դիմելով նահանգապետներին ու քաղաքապետներին՝ առաջարկում է իրանց իրաւասութեան ներքոյ գտնվող տեղերում համապատասխան անցագիր չունեցող թիւրքահպատակներին երկրից չարտաքսել, այլ ուշադրութեան առնել թիւրքական պատշաճաւոր հիւպատոսների տուած վկայականները, որ այդպիսիները մինչև սահմանված յուլիսի 1-ը խնդիրք են տուել իրանց անցագիր տալու մասին, բայց չեն ստացել դեռ ևս։

✦ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի զեկուցումը՝ Վերայի պրոգիմնազիան ի հաշիւ գանձարանի Թիֆլիսի 6-րդ գիմնազիա դարձնելու և նրա նախկին ինսպեկտոր Լ. Զուբալովին դիրեկտոր նշանակելու համար, օգոստոսի 16-ին հաստատվել է Փոխարքայի կողմից։

✦ Ալէքսանդր II Կայսրի յիշատակին Ախալքալաքի գաւառի Գօրբէօ գիւղում կառուցված արձանի բացման հանդիսին ներկայ լինելու համար օգոստոսի 17-ին այնտեղ է գնացել Թիֆլիսի նահանգապետ Ա. Գ. Զերնեավսկին։

✦ Ժողովրդական տան հայկական սեկցիան ստացել է նոր կանոնադրութիւն, որով պէտք է սկսի շուտով գործել մի նոր ժողովրդական ներկայացումներ կազմակերպող հայկական դրամատիկ խմբակցութիւն։ Բացի սեկցիայի նախկին անդամներից կարող են անդամագրվել բոլոր ցանկացողները և գործով հետաքրքրվողները։ Տարեկան անդամավճարն է 3 ռուբլի։ Առաջին ընդհանուր ժողովը, որը պէտք է ընտրվի նոր խմբակցութեան վարչութիւնը, կայանալու է կիրակի, օգոստոսի 26-ին։ Գործի հետ ծանօթանալ ցանկացողները կամ անդամ գրվողները պէտք է դիմեն Դրամատ. Ընկերութեան գրասենեակը՝ улица Петра-Великаго № 3.

✦ Վերադարձաւ արձակուրդից և ստանձնեց իր պաշտօնը Թիֆլիսի ոստիկանապետ գնդապետ Զասիպկինը։

✦ Այսօր Նաթախտարի են ուղևորվում քաղաքային ձայնաւորների մի խումբ ինժ. Ն. Աբելեանի հետ միասին դիտելու տեղական աղբիւրները։ Ինչպէս ասում են գործին լաւատեղեակ անձինք, Ծալկայից և Նաթախտարիից Թիֆլիս ջուր բերելու ծրագիրներից՝ թէ ջրի յատկութեան և թէ քանակի տեսակէտից ու առհասարակ՝ խոշոր առաւելութիւններ ունի Ծալկայինը, թէև նա անհամեմատ աւելի ծախք է պահանջում քան Նաթախտարինը։ Զրանցքը կը նստի քաղաքի վրա առնուազն 7—15 միլիոն ռուբլի։

✦ Երկուշաբթի և երեքշաբթի, օգոստոսի 20-ին և 21-ին, կայանալու է Մուշտայիդում Խարփուխի Վրաց Թատերասիրաց Ընկերութեան օգտին մեծ զբօսանք։ Ահա մի տարի է, ինչ Խարփուխը, այդ բոլորից

կութիւնը։ Այդտեղ այդ օրերը շրջակայ գիւղերից հաւաքվում է հոծ բազմութիւն՝ ծախելու համար իրանց ապրանքները և մթերքները։ Բազարում առ ու ծախսի համար հրապարակ են դուրս բերվում՝ ընտանի կենդանիներ և թռչուններ, զանազան տեսակ արհեստների արտադրութիւններ, գորգեր և կարպետներ, չթեղէն, մրգեղէն և առհասարակ ապրուստի համար աւագ անհրաժեշտութիւն ունեցող մթերքներ և ուտեստ։

Պետրոպավլովսկան իր հողերը ոռոգում է Արաքսի ջրով։ Այս տարի, շնորհիւ երկարատև երաշտի, ջուրը զգալի չափով իջել է թողնելով ծարաւ արտերն ու մնկարանները։ Հետևապէս բերքը Պետրոպավլովսկում հաղիւ բաւարար համարվի։ Գիւղի գլխաւոր բերքը՝ բամբակը առատութիւն չէ խոստանում, թէև շրջակայ գիւղերի համեմատութեամբ՝ դարձեալ Պետրոպավլովսկան է բաղդաւոր։

Բամբակին մեծ վնաս է հասցրել մանաւանդ մորեխը, որ բոլորովին անպատելի կերպով գաղթել է Արաքսի միւս ափից Պարսկաստանից։ Ինչպէս տեղեկացանք, 12 ռուս գիւղերի բամբակը բոլորովին խժռված է մորեխից։ Գիւղացիները, խիստ յուսահատ դրութեան մէջ, կարծեօք, դիմել են Փոխարքային և խնդրել կամ վերադարձնել իրանց Ռուսաստան և կամ մորեխի վնասակար ազդեցութիւնից և ներկայութիւնից պաշտպանվելու միջոցներ տալ։ Հետևանքը յայտնի չէ։

Զը գիտենք ինչպէս կը վերջացնեն գիւղացիները իրանց հաշիւը մորեխի հետ։ Բայց գիտենք, որ կայ փորձ, նոյնիսկ իրական գործ, աջող կերպով պայքար մղելու ջրի սակաւութեան դէմ։ Դարաւ-Դոնիից սկսած 120 վերստ երկարութեամբ և 9 սաժ. լայնութեամբ փորվում է մի հիմնական ջրանցք՝ իր բազմաթիւ ճիւղ-ջրանցքներով՝ Արաքսի ջուրը յիշեալ տարածութեան վրա փռված գիւղերին մատակարարելու համար։ Կատարված է, կարծեօք, գործի կէսը միայն։ Սատիկ շոգին և մեծ քանակութեամբ վխտացող օձերին չը դիմանալով՝ բանւորները աշխատանքը թողել են երեսն ի վայր և փախել։ Գործի իսկական կապալառուներն են Թուրք Վելիեֆն ու հայ Տէր-Գրիգորեանը, իսկ ենթակապալառուն՝ մի հրէայ, որը նոյնպէս փախել է։

Մինչև ռուս գիւղերի հատատակելը Մուղանի այդ մասում աւազակութիւնը, աւարառութիւնը և մարդասպանութիւնը հասած են եղել իրանց գագաթնակէտին։ Ներկայումս կեանքի և գոյքի որոշ չափով ապահովութիւն է տիրում այդտեղ։ Երևում է, որ թէ ռուս գիւղացիները և թէ պետական պաշտօնատար անձինք խիստ մեծ ջանք են թափել թուրք տարրի բարքի յիշեալ կողմութիւնները փոքր ինչ մեղմացնելու գործում։ Զը նայած դրան՝ թուրքը այնու ամենայնիւ նուաստութիւն չէ համարում իր աւանդական բարքի կողմութեան արտայայտութիւնները հրապարակի վրա պահելու և դատարաններում քարշ տալու։ Հէնց մեր ներկայութեամբ պետական հիմնարկութիւններում քննվում էին անարգ ոճրագործութեան, մարդասպանութեան, աղջիկ փախցնելու և առևանգելու թարմ դէպքեր, որոնք ապացուցում են, որ Մուղանի թուրքը տարբերը դեռ ևս շատ հեռու է կանգնած իսկական, լուսաւոր կուլտուրայից։ Թուրք մտաւորականները ցանկալի գործ կատարած կը լինեն, եթէ իրանց ուշադրութեան մի փոքրիկ մասը նուիրեն Մուղանի իրանց ազգակիցների լուսաւորութեան գործին։

Հայրենակից

ՀԻԻԱՆԴԸ

(Բոգդանովիչից)

Բժի՛շկ, դուք ասում էք, որ ես առողջ եմ։ Իսկ իմ ծնողներին ասել էք, որ հիւանդ եմ, որ անյապաղ ինձ հիւանդանոց տեղափոխեն։

Ա՜խ, բժի՛շկ, բժի՛շկ, իսկապէս դուք տարօրինակ էք և չէք հասկանում, որ այս հիւանդութիւնը իմ ուրախութիւնն է. չէի ցանկանայ ունենալ այն առողջութիւնը, որով դուք էք հիւանդ։

Իմ խօսքերը ձեզ ծիծաղելի են թւում։ Սակայն հետաքրքրական է իմանալ, թէ ում է աւելի կարևոր դեղին տունը ուղարկել։ ինձ թէ նրանց, որոնք վայրենի չարութեամբ են շրջապատում։

Դատեցէք ինքներդ... Առանց բացառութեան բոլորն էլ գիտեն, որ պէտք է ապրել այնպէս, ինչպէս հրամայել է մեր Արարիչը. որ բոլոր դժբաղդներն ու որբերը՝ մեր եղբայրներն են։ Եւ որպէսզի նրանց տանջանքը թեթևացնենք, հարկաւոր է հարուստին կանչել...

Բոլորն էլ գիտեն, որ մեր սուրբ պարտականութիւնն է մեր մերձաւորների երջանկութեան համար աշխատել ու չարչարվել... Եւ ինչ, ինչ հետևանք... Հետևանք, աւաղ, ոչ մի... Այո, նման ճառերով ես միայն էֆֆեկտ գործեցի...

Ես տեսայ մի գեղեցիկ անարատ աղջիկ. անարատ, գեղեցկութեան մի իսկական տիպար... Թւում էր, թէ մեզ մխիթարելու համար Արարիչը դրախտից էր նրան ուղարկել։

Վեհ զգացումներ, լուսաւոր միտք, խելք, սիրտ, գեղեցկութիւն, այս բոլորը նրա մէջ էր ամփոփված։ Նա սիրում էր երաժշտութիւն, պօէզիա, մէկ խօսքով՝ գեղարուեստի բոլոր ճիւղերը։ Բայց խեղճը աղքատ էր... Եւ վաճառումը, նրա խայտառակ վաճառումը կայացաւ... Անառակ ծերունին միլիոնով նրա կուսութիւնը գնեց... Զուր անցան զանգատները ու հառաչանքները... Ոսկու հնչիւնը խլացրեց արդարութեան ամեն մի ձայն... Եւ ես հեծկլտում էի, հեծկլտում էի՝ թափելով արիւնախառն արցունքներ... Հասկացէք վերջապէս, չէ որ մի անմեղ կեանք էր խորտակվում։

Եւ նա բռնելով իր կեղտոտ ձեռքերով անմեղ զոհին... Եւ մեր օրերի Աստուածամօրանն փառաբանվում էր...

Իսկ դուք ինձ ասում էք. «Ինչու համար ես լալիս»։ Զէ որ աղջիկը աղքատ էր. դուցէ նա կարողանար բաղդաւորութիւն գտնել այդպիսի ամուսնութեան մէջ, բայց...

Ծերունի ամուսինները, ամուսին... Հա-հա-հա... Հարստութիւն, կառքեր, ընդունելութիւններ, ճանապարհորդութիւններ, միշտ փառաւոր ճաշ և յետոյ փողոց...

Այո, նա խելագարվեց... Ես նրան կրկին դուրս բերի խայտառակութեան և անառակութեան գրկից և իմ անունը նրան տուի։

Սիրում էի նրան՝ որպէս մի աստուածուհի, բարձր ու վեհ. խաբեբային ես սրբի տեղ էի ընդունել։ Բայց նա անգթաբար ու անամօթաբար ինձ խաբում էր ու կեղծում շարունակ, իսկ ես յիմարս ոչինչ չէի նկատում...

Եւ ահա օրհասական ժամը վրա հասաւ... Ա՜խ, վշտաբեկ սրտով եմ յիշում այն խայտառակութեան րօպէն։ Որչափ վիրաւորված զգացի ինքս ինձ, երբ մանելով սենեակ՝ տեսայ, թէ ինչպէս նա, իմ օրինաւոր կինը և իմ իշխանաւորը... Ա՜խ, ես կանգնած էի անշարժ, թւում էր՝ աշխարհը իմ գլխին փլվեց, տակն ու վրա եղաւ, և ամեն ինչ վայրկենաբար խորտակվեց՝ և՛ յոյս, և՛ հաւատ, և՛ սէր... Ա՜խ, այն գեղեցկութիւնը աննման էր... Այդ խայտառակութեան համար քիչ մնաց խեղդէի նրան։ Իսկ բարեկամներս բոլորն էլ միաձայն կրկնում էին. «Դու չօգտվեցիր հանգամանքից, դու ի զուր բաց թողիր աքանչելի առիթը. կինդ իշխանաւորիդ է դուս եկել»...

Ուրեմն ինչ, սիրելի բարեկամներս... Զէ որ այդ մի գեղեցիկ ու փայլուն ապագայ էր ինձ համար... Ցիմար, յիմար. այո, դուս խելագարվել ես...

Այդպիսի յիմարութիւններ ես շատ եմ արել իմ կեանքում. չէ որ աշխարհը անտեղի չէ ինձ խելագար անուանում...

Այո, բժիշկ, դուք իրաւացի էք. ես խելագար՝ խիստ դատելով՝ այստեղ այլևս տեղ չունեմ. ես դեղին տուն կը գնամ...

Պայմանական ճշմարտութեամբ և անպայման խաբէութեամբ, դուք կարողանում էք մի խելք տակն ու վրա անել... Ծածկելով անառակութիւնը համեստութեան քողով, դուք ձեզ առողջ կը համարէք. և ցաւակցելով իր դժբաղդ բարեկամին՝ նուրբ կը սեղմէք նրա ընկած անբաղդ կնոջ ձեռքը...

Բժի՛շկ, դուք ասում էք, որ ես առողջ եմ։ Իսկ իմ ծնողներին ասել էք, որ հիւանդ եմ և որ անպայման անյապաղ ինձ հիւանդանոց տեղափոխեն...

Այո, ես ինքս կը գնամ. բայց պէտք է ասեմ բոլոր անցեալ և ներկայ լրբերին, որ աւելի լաւ եմ համարում մնալ խելագար, քան ունենալ նրանց առողջութիւնը։

Աբմ. Մանուկեան

մուացված տեղը, արժանացաւ (Բոտանիկական փողոցի վրա) մի փոքրիկ առուդիտորիա-թատրոնի, որտեղ խաղում են կազմակերպված թուրք և վրաց խմբերը, իսկ պաշտօնական կերպով՝ մի քանի հայ թատերասէրներ։ Թատրոնը ունի շատ պակասութիւններ անհրաժեշտ պիտոյքների կողմից։ Ահա այդ պակասութիւնները լրացնելու համար, ընկերութիւնը կազմակերպում է յիշեալ զբօսանքները, որոնք, յոյս ունենք, հասարակութեան կողմից կը գտնուն համակրելի ընդունելութիւն։

✦ Թիֆլիսի I իգական գիմնազիայում վերաքննութիւնները կը սկսուին օգոստոսի 22-ից, իսկ ընդունելութեան քննութիւնները նախակրթարաններում և 1-ին, 2-րդ, 5-րդ և 8-րդ դասարաններում օգոստոսի 25-ից։

✦ Երկրորդ իգական գիմնազիայում ընդունելութեան քննութիւնները նախապատրաստական, 1-ին, 2-րդ և 6-րդ դասարաններում և վերաքննութիւնները բոլոր դասարանների աշակերտուհիների համար կը սկսուին օգոստոսի 22-ից։

✦ Օգոստոսի 17-ին, ոստիկանական պրիստաւ Ս. Մ. Դաւիդովը սանիտարական բժիշկ Տատեւի և սանիտարական մասնաժողովի միւս անդամների հետ միասին դիտեց մի շարք մսեղէն, մրգեղէն և այլ խանութներ։ Մասնաժողովը ոչնչացրել է բաւականաչափ խակ և փչացած մրգեր ու բանջարեղէններ։

✦ Օգոստոսի 15-ին, ցեր. ժամը 5-ին, կենտրոնական պօստատանը մարկաներ վաճառող Օլգա Սերգէյեվնա Դանչեվսկայան հերթապահ քաղաքապետի միջոցով յայտնել էր, որ իբր մի անյայտ երիտասարդ մտել է իր մօտ և գողացել է մարկաները։ Կասարված քննութիւնը պարզել է, որ Դանչեվսկայայի յայտարարութիւնը շինծու է, որ նրա մօտ վաճառելու համար գտնվող մարկաներից պակասում է 238 բուբլի 81 կոպէկի, իսկ իր թղթապանակում գտնվել է 300 բուբլի անձեռնմխելի։

✦ Օգոստոսի 17-ին Թիֆլիսեցի Տիգրան Մանուկեանը յայտնել է ոստիկանութեանը, որ իր բացակայութեան միջոցին անից գողացել են երեք գորգ 130 բուբլի արժողութեամբ։ Պարզվել է, որ գողացել է Մանուկեանցի նախկին ծառան՝ Երեւանի նահանգի Նորաշէն գիւղացի Յովհաննէս Եգինեվը։

✦ Օգոստոսի 17-ին քաղաքի զանազան մասերում կալանաւորված են անցագիր չունեցողներ 51 հոգի։

✦ Դատաստանական պալատը դռնփակ նիստում քննեց վրաց գրող իշխ. Իլիա Նակաշիձէի գործը, որը մեղադրվում էր արգելված գրականութիւն պահելուն համար։ Պալատը դատապարտել է նրան մի տարվայ բերդարգելութեան։

✦ Թիֆլիսի պօստ-հեռագրական վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ ներկայ օգոստոսի 20-ից կը կատարվեն հասարակ և ապահովագրված նամակների ու բանդերոլների ընդունելութիւններ, նոյնպէս և ամեն տեսակ նամակաղրոշմների վաճառումն քաղաքի հետեւեալ դեղատներում. 1) Բ. Պ. Բէդէի (Լերմոնտովսկայա և Բոլշէչէվսկայա փողոցների անկիւնում), 2) Է. Զ. Զելկինի (Օլդենինսկայա փող. № 29)։ Ընդունելութեան գործողութիւնները տեղի կունենան յիշեալ դեղատներում օրվայ բոլոր ժամերին։

✦ Թիֆլիսի շուկայում արդէն վաճառում են սերկեվիլներ, փունը 5 կոպէկից սկսած։ Կանաչ վարունգներ—տեղական չը կան, համարեա—բերում են շրջակայ գիւղերից, որոնք այնքան էլ լաւ չեն և ծախվում են 3 հատը 5 կոպէկով։ Դեղձը վաճառում են 7—12 կոպէկ փունը։ Մեծ քանակութեամբ ձմերուկներ և սեխեր են բերված. կարելի է գնել միջին մեծութեան ձմերուկը 15—20 կոպէկով, սեխը՝ 5 կոպէկից սկսած, ի հարկէ, նայելով յատկութեանը և մեծութեանը։ Խաղողի գները 7—12 կոպէկ փունը՝ նայելով տեսակներին։

✦ Թեւաւի դաւառի Ցինանդալի գիւղում Թիֆլիսի արական առաջին գիմնազիայի աշակերտ Դաւիթ Ազաուրովը, որսորդական հրացանով խաղալիս, անգիտակցաբար արձակելով վիրաւորում է թեթեւ կերպով իր ազգական ընկերոջը՝ Դաւիթ Ազաուրովին և մահացու կերպով՝ 7 տարեկան Թեդո Զեչիաշվիլին, որը մեռնում է մի ժամից յետոյ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վլադիկավկազ, 9 օգոստոսի

«Մշակի» № 167-ում Նորեկը խօսելով Աբասթումանի հայերի մասին, ի միջի այլոց գրում է. «...Ընտրել են խմբապետ Տօնականեանին քահանացու, որը ծխական դպրոցն է աւարտած»...

Ճիշդ է. ես ծխական դպրոց եմ աւարտել, սակայն առանձին քննութեամբ ձեռք եմ բերել նաև ուսուցչական ցենզ և խմբապետական իրաւունք։ Երկար տարիներ եղել եմ խմբապետ, աւանդել եմ հայոց լեզու, կրօն, թւաբանութիւն հայոց եկ.-ծխ. երկդասեան դպրոցներում (Մօզդոկ, Ախալքալաք) և մի տարի հեթթապահ աւագ ուսուցիչ եմ եղել Ախալքալաքի հայոց դպրոցում, նոյն դպրոցի մանկավարժական խորհրդի ընտրութեամբ։

Այս ամենը փաստաթղթերով յայտնի են եղել ինձ քահանայացու ընտրող ծխական ժողովին։ Տ. Տօնականեան

ԱՆՏԵՂԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ *)

Լրագիրները հաղորդում են, որ ներքին գործերի մինիստրութիւնը Վեհափառ Կաթողիկոսին գրել է, թէ հայ քահանաները հրաժարվում են վկաներին ռուսերէն երդմնեցնելու և մետրիկականները նոյնպէս գիւղական հայ քահանաները ռուսերէն չեն գրում։ Շատ հասկանալի պատճառներով այս պահանջները, որ նախկին կաթողիկոսների օրոք անկատար էին թողնվում, այժմ պիտի հրապարակ գային։ Բայց այս չէ խնդիրը. թող այս լուրջ խնդիրների պատասխանատուութիւնը ներկայ դրութիւնն ստեղծողների խղճի վրա ծանրանայ. թող այն հայ ինտելիգէնտները, որ իրանց անձնական փառամոլութեան և եսական հաշիւներից դրդված էին գործում հասարակական լուրջ խնդիրներում, այսօր հայ ժողովրդին հաշիւ տան իրանց արածների համար։ Բայց ամենից ցաւալին այն է, որ այդ մարդիկ շարունակում են էջմիածնի գործերը անդունդ մղել և Վեհափառ Կաթողիկոսին անելանելի դրութեան մէջ դնել։ «Հօրիզոն» թերթը պահանջում է, որ Վեհափառ Կաթողիկոսը մինիստրական թղթերին պատասխանելու համար ժողովներ անի և գիտակցական տարբերի խորհրդակցութեամբ գործի։ Այս այնպիսի մի վտանգաւոր և անմիտ խորհուրդ է, որի նմանները շատ ենք տեսել և հետեւանքներն էլ գիտենք։

Այս կը նշանակի՝ այս ճանապարհով պատրաստած պատասխանները առաջուց անաջողութեան դատապարտել, որովհետև իսկոյն կասկածելի կը դարձնեն Կաթողիկոսին և կը լարեն յարաբերութիւնները կառավարութեան հետ, որ բոլորովին ցանկալի չէ։ Հանգուցեալ Իզմիրլեանն էլ առանց կառավարութեան հետ բանակցելու թեմական խորհուրդներ ստեղծեց, նոյնպէս խորհրդակցութիւններ կազմակերպեցին և թողեցին մի զեղեցիկ գործ, որ օրինական ճանապարհով շատ հեշտ կարելի էր իրագործել։ Հարկաւոր էր միայն, որ դիմումը լինէր օրինաւոր և լուրջ պատճառաբանութեամբ։

Այժմ այնպիսի պահանջներ են դրված, որ իշխան Գոլիցինի օրոք անդամ կառավարութիւնը չը կամեցաւ իրագործել։

Այդ այնպիսի պահանջներ են, որ իսլամ հոգևորականութիւնից և թուրք ժողովրդից չեն անում. հայ ժողովուրդը հօ թուրքից աւելի խոտութիւնների արժանի չէ։

Գիւղական քահանաները ռուսերէն չը գիտեն, ուրեմն պիտի ամեն մի գիւղ մի մի ոգէտ գրագիր պահի այս գործի համար, որոնք նախ միայն կը բազմացնեն կեղծ մետրիկականների թիւը և բազմաթիւ դրժբարդութիւնների ծնունդ կը տան, և երկրորդ ժողովրդի վրա կաւելանայ մի նոր տեսակ հարկ։ Կան բազմաթիւ շատ լուրջ պատճառաբանութիւններ էլ, որոնց հետ չէ կարող չը համաձայնել կառավարութիւնը. կան նոյնիսկ օրէնքների վրա հիմնված պատասխանելու բաներ. բայց պէտք է նախ զանազան օրինագրքերում ցրված այդ օրէնքները գիտենալ և երկրորդ՝ պէտք է էջմիածնի գործերի դեկավարման մասնակցողները լուրջ պատասխանատուութեան տէր մարդիկ լինեն և ոչ առանց պատճառի խանգակչութիւն և դժուարութիւն ստեղծող։ Գ. Ենգիբարեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Խարբինում տեղեկութիւն է ստացվել, որ եապօնացիք ուժեղացնում են իրանց զօրքերը Հարաւային Մանջուրիայում։

✦ Ստարօֆիցերական մամուլը խորհուրդ է տալիս ֆինլանդական պաշտօնեաներին, կարելոյն չափ աշխատել մնալու իրանց պաշտօններում, որպէսզի կառավարութիւնը հնարաւորութիւն չը տրվի ֆինլանդացիներին փոխարինել ռուսներով։

✦ Բագուի նահանգական դատարանը դատապարտել է բանտապետի օգնական Բիրիւկովին 3 ամսվայ և միւս օգնական Բոգդանովին ու 3 վերակացուին 3 շաբաթական կալանաւորութեան բանտարկեալներին ծեծելուն համար։

✦ Տաշկենտում քաղաքի զանազան մասերում կատարվել են բազմաթիւ խուզարկութիւններ մասնաւոր տներում. գրաւված են գրութիւններ։

✦ Առաջիկայ սեպտեմբերի 3-ին Կ. Պոլսում տեղի կունենայ երիտասարդ Թիւրքերի տարեկան ընդհանուր ժողովը։

✦ Բ. Դուռը համաձայն է զիջելու Զերնօգորիային սահմանազլխի վիճելի հողերը։

✦ Մօնգոլիայում ընդհարումները վերջանում են առհասարակ չինացիների փախուստով։ Իրանց պարտութիւնը չինացիները բացատրում են նրանով, որ մոնգոլական զօրքերի շարքում կան ռուսական զօրամասեր և հրահանգիչներ։

✦ Չինական Տանշաոու քաղաքում ապստամբութիւնը սաստկանում է։ Ապստամբվել են 9000 զինուորներ, որոնք յետ մղեցին իրանց դէմ ուղարկված գվարդիական զօրամասերը։ Կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում Պէկինը պաշտպանելու։

✦ Խարկովի նահանգի գիմատվոները հիմնում են շրջանային գիւղատնտեսական թանգարաններ, ուր պէտք է հաւաքվեն էնտոմոլոգիական (միջատախօսական), բուսաբանական և այլ հաւաքածուներ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

17 օգոստոսի

ԲԱԴԷՆ։ Վիէննային մօտիկ վախճանվել է փիլիսօփայութեան պրոֆէսօր, պալատի անդամ և Պետերբուրգի ճեմարանի թղթակից Թէօդոր Գոմպերցը։

ՏՕԿԻՕ։ Կոնչինկէնում մրրիկը պոկեց 3,233 տուն և կիսով չափ քանդեց 5,993։ Ծանր կերպով վիրաւորվել են 338 հոգի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գաղի գործարանում հրդեհ ծագեց։ Այրվեց այն շէնքը, ուր պահվում էին գաղի լուսաւորութեան վերաբերեալ հին գործիքներ։ Միւս շէնքերը հրդեհաշէջները ազատեցին։ Վնասը 200,000 բուբլու է հասնում։

Արգելք է դրված «Невск. Голосъ» լրագրի 7-րդ համարի վրա նրա մէջ տպված մի քանի յօդուածների համար։

ԲԷԼԳՐԱԴ։ Աբբայորդի Գէօրգիի լուրջ հիւանդութեան մասին տարածված լուրերն անհիմն են։

ՄՕՍԿՎԱ։ Ուսումնարանական շրջանի հոգաբարձուն կարգադրել է իր իրաւասութեան ներքոյ գտնվող բոլոր դպրոցների շէնքում դնել Ալէքսանդր I կայսրի կիսանդրին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վ. և ՍՏ. ՍՄԲԱՏԵԱՆՆԵՐԻ
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶԸ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

միջնորդութիւն է յարուցել, ուր յարկն է, թոյլատրութիւն ստանալու սինեմատոգրաֆ ձեռք բերել և դասարանում աւանդվելիք նիւթերը, կարելիին չափ, ցուցադրել։ Երգերով շարժական խաղերը, Սօլօլի սիստեմով մարմնամարզութիւնը կը դրվի ուելի հասատուն հիմքերի վրա։ Աչքի ընկնող տեղ կը բռնի նկարչութիւնը, որի համար հրաւիրված է փորձված և հմուտ ուսուցիչ։ Մայիսին քննվող 9 աշակերտ քննութիւնը աջող բռնեցին զանազան գիմնազիաներում։ Կայ 2 գիշերօթիկ տեղ։ Դասերի սկիզբը սեպտ. 1-ին։ Աշակերտների ընդունելութեան և պայմանների մասին կարելի է դիմել ամեն օր։ Սօլօլակ, փողոց Պասկեվիչի, № 13.

(ա.օ.) 588. 5—3

Առեւտրակ. ուսումնարան
ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ, և
Հաշուապահական կուրսեր
ԻՎԱՆ Զ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ընդունելութեան և լրացուց. քննութ. օգոստ. 27-ից։ Պարապմունքները առաւօտեան սեպտ. 3-ից, իսկ հաշուապահականում 15-ից։ Մլիայլովսկի պր. № 53։

(Դ.Կ.) 594. 5—3

Թէոդոսիայի Հայոց Աղքատախնամ Հոգաբարձութեան
ԿԱՐՈՒՔԵՒԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ համար հրաւէր է աւարտման վկայականով
ՄԻ ՀՄՈՒՏ և ՓՈՐՁԱՌՈՒ
ՎԱՐՊԵՏՈՒՀԻ

Ռոճիկ ամսական 30 բուբլի, բնակարան և վառելիք։ Մանրամասն տեղեկութեան և վկայականի ներկայացման համար դիմել՝ Ѳеодосія, Священнику Армяно-Григоріанской церкви Варданянцу.

(ա.օ.) 596. 4—3

!!! ԱՄԱՉԵՑԷՔ !!!

Ձեր կօճակները ամբողջապէս ծածկված է բծերով. մինչև նա կարող է լինել բոլորովին նոր։ Դնէք բծասան կրէմ



Դուք միշտ մաքուր կը լինէք։ Վաճառվում է ամենուրեք։ Ռուսաստանի համար գլխաւոր պահեստը՝ Ի. Պ. Նէստէրովի մօտ, Ս.-Պետերբուրգում, Старо-Петергофскій пр. соб. д. № 18.
Կովկասում բացառապէս վաճառվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների խանութում, Թիֆլիսում, Բագուում, Բաթումում։

(10, 20) 334. 10—8

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են հետեւեալ գրքերը.

Արաբաջեան, Խզմալեան, Միքայէլեան. «Կայծեր», նոր դասագիրք, Դ. տարվայ, հայոց ծխ. դպրոցների համար	75 կ.
«Наша азбука», կովկասեան դպրոցների համար . .	30 կ.
Արարատեան Աղ. «Երկու թումբ կամ խեղճ սիրահարներ»	20 կ.
Տէր-Աւետիքեան. «Պատմուածքներ»	50 կ.
Կ. Միքայէլեան. «Զմրան երեկոյ»	60 կ.
Յարութիւնեան Մ. «Բացատրական բառգիրք», բաժանորդագրութեամբ, 4 պրակը .	1 բ. —
«ՊԱՏԱՆԻ» ալմանախ IV (VI)	20 կ.
Դանիէլեան Յով. «Ժանտախտ»	20 կ.
«ԳՈՒՌԻՆ» ալմանախ III	1 բ. 50 կ.
Բուրակին. «Մտորերկրեայ կրակ»	50 կ.
Շեխան ըժ. «Տուբերկուլոզը, թոքախտը և հասարակութիւնը»	25 կ.
Մուրացան. «Գէորգ Մարզպետունի», պատմական վէպ	1 բ. 20 կ.

Մինչեւոյն գրատանը ստացված են մեծ քանակութեամբ դասագրքեր թէ հայոց ծխական և թէ միջնակարգ դպրոցների համար։ Խնդրվում է նախօրօք դիմել պատուէրներով՝ Тифлисъ, Центральная Книжная Торговля. С. П. Теръ-Исраельянцъ.

603. 1—1

ԱՆԴԻԺԱՆԻ հայոց ծխ. երկդ. դպրոցի համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՄԷԿ ՈՒՍՈՒՑԻՉ
ԵՒ
ՄԷԿ ՈՒՍՈՒՑՈՒՀԻ

25 ական դասերով, դասագինը 25 բուբլուց։ Ցանկացողները կարող են դիմել Հոգաբարձութեան հետեւեալ հասցէով. Андижанъ, Армянскому Церк.-Прих. Попечительству.

(ա. օ.) 597. 3—3

ՀՈՆՕՐԲԻԷԻ (ՏՐԻՊՊԷՐ) ԴԵՄ
ՆՈՐ-ՄՈՒԴՈՅ
„SALO—ՊԻԶԻԼԻՆ"

Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեւնարկը կցված է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղներում, հատը՝ 1 բ. և 1 բ. 80 կ.։

Միաժամանակ լաւ է, ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայատուկ ընթացքը։

ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека В. Конгейма.

Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։

Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների վաճառանոցում։

(Կ.) (П. 23620) 52 32

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆՑՆԵՐԻ

Թիֆլիսում (Նիկոլայէվսկայա փող. № 36, Վօրոնցովի պալատի մօտ)։

Մանրամասն տեղեկութիւններ տրվում են Կուրսերի գլխաւորը ամեն օր՝ երեկոյեան ժամը 4—7-ը։

(ա.օ.) 579. 25—7

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ընդունվում է բաժանորդագրութիւն՝
ՕՐՄԱՆԵԱՆ Մ. ԱՐՔ.-ի նոր աշխատութեան՝
„ԱԶԳԱՊԱՏՈՒՄԻ"

համար։ Նիւթը բաղկացած կը լինի քսան պրակից. իւրաքանչիւր ամիս լոյս է տեսնելու մի պրակ։ Առաջին պրակը լոյս կը տեսնի սեպտեմբերի սկիզբներին։ Բաժանորդագրութեամբ պրակը արժէ 50 կոպէկ։

Ցանկացողները կարող են դիմել՝ Тифлисъ, Центральная Книжная Торговля, С. П. Теръ-Исраеліанцъ. (Կ.) 571. 3—3

ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

վարչութիւնը յայտնում է, որ առաջիկայ ուսումնական տարվայ համար ընդունելութիւնները սկսված են. վերաքննութիւնները լինելու են օգոստոսի 27-ին, իսկ նորեկների քննութիւնները 28-ին։ Ցանկացողները խնդրի հետ պարտաւոր են ներկայացնել ծննդեան և ծագկի վկայականներ։

Քննութիւնները տեղի կունենան առ. ժամը 8½-ից։ Ուսումն սկսվելու է սեպտեմբեր 3-ին։

(Չ.ու.կ.ե.) 602. 5—1

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միքայէլեան պր. 24/4. Տելէֆոն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ըստ կեանքից։ Առարկաները են. ա) պարտադիր. 1) հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկան, բանկային և գործարքական). 2) Առեւտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առեւտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն). 5) Առեւտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Գայիչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Ѳար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա (ռեմինգտոն և ուր. և 4) Առեւտ. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և գաս-գաս։ Ունկնդիրների թիւն շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնաբարում են հաշուապահներ, օգնականներ և առեւտ. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 228 ունկնդիր, որոնցից 42 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ առեւտ. գիտութեան կանդիդատ՝

(Ե. Հ. Կ.) 555. 0—8 Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԵՒ ԳՐԱՍԵՆԵԿԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(XIII տարի)

Դասընթացքներում աւանդվում են.—Հաշուապահութիւն կրկնակի իտալական սիստեմով, յարմարեցված արդիւնաբերութեան զանազան ճիւղերին, առեւտ. թւաբանութիւն, առեւտ. թղթակցութիւն, առեւտրական իրաւունք, վայելչագրութիւն և ցանկացողների համար ուսուցում գրող մեքենայի վրա։

Պարապմունքների սկիզբն է 1912 թի սեպտեմբերի 15-ին։ Դասընթացքները տեւելու են վեց ամսից ոչ պակաս։ Պարապմունքները երեկոներ՝ շաբաթը երեք անգամ։

Վճարն է 40 բ. ամբողջ դասընթացքի համար։ Խնդրագրերը յանուն Թիֆլիսի Առեւտրական Դպրոցի վերատեսչի ընդունվում են դպրոցի գրասենեակը ժ. 10—1.

(Հ.Կ.) 576. 6—4

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Դոյուրիւն ունի 1895 թ.)

Հեղինակ առեւտրական հաշուապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։

Յարիս է երկու սեռի անձանց մասնագիտական առեւտրական գիտութիւն 4-ամեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով։

Դասընթացքներում անցնում են.—Առեւտրական և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի հաշուապահութիւն, նաւթարդիւնաբերութեան և նաւթագործութեան ճիւղի հետ միասին, զանազան մեթոդներով, կատարեալ իւրացումն կրկնակի իտալական սիստեմով և առեւտ. թւաբանութիւն, առեւտ. նամակագրութիւն, մուրհակային և առեւտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, վատ ձեռագրի ուղղումն։

Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Ѳար լեզուներ, 2) Մեռնեոգրաֆիա (սղագրութիւն) և 3) Ռեմինգտոնի վրա գրել։

Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։

Վկայագրերը տրվում են մինիստրութեան թոյլտւութեամբ։

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Խնդրագիրների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Դասընթացքներին կից հատատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։

Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44.

(Կ. Հ.) 568. 0—5

*) Ներկայ յօդուածում չօշափված հարցերի առիթով ցանկալի է մարերի փոխանակութիւն։ Նմբ.